ԱԿԱՆԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԱԳԵՏ-ՀԱՅԱԳԵՏԸ

(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի
ծննդյան 80-ամյակի առթիվ)

Բոլորեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանի 80-ամյակը: Հիրավի, վաստակաշատ ու տաղանդավոր գիտնականի, գիտության անխոնջ մշակի անցած ուղին իր հայրենիքին, հարազատ ժողովրդին և նրա հոգևոր արժեքներին բոլորանվեր ծառայելու և անձնադիր նվիրման փայլուն և ուսանելի օրինակ է:

Ծնվել է 1930 թ. Գյումրիում, դպրոցական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում: Եղել է Հայաստանի մայր բուհի՝ Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի շրջանավարտ և ուսանել նույն հաստատության ասպիրանտուրայում: 1958 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ տասը տարի անց՝ 1968 թ., Թբիլիսիի պետական համալսարանի գիտական խորհրդում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1972 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Ն. Հովհաննիսյանի գիտական սրընթաց վերելքը սկսվում է 1960 թվականից, երբ նա աշխատանքի անցավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության սեկտորում՝ սկզբում որպես կրտսեր գիտաշխատող, ապա ավագ գիտաշխատող և Արաբական երկրների գիտահետազոտական խմբի ղեկավար:

Այդ նույն օրերին արևելագիտական այդ նորաբաց օջախում հավաքվեց խանդավառ ու տաղանդաշատ հայ երիտասարդների մի փաղանգ, ոգեշնչված այն գիտակցությամբ, որ կոչված էր նոր շունչ և ոգի հաղորդելու երեքհարյուրամյա վաղեմություն ունեցող հայ արևելագիտությանը, որը XX դ. սկզբին հայ ժողովրդին բաժին հասած զանազան արհավիրքների պատճառով մոռացության էր մատնվել:

Նիկոլայ Հովհաննիսյանը մյուս նվիրյալների հետ համահավասար իր ուսերին կրեց Արևելագիտության ինստիտուտի ձևավորման ու զարգացման ողջ ծանրությունը:

Ավելի քան կես հարյուրամյակ գիտական այդ նշանավոր օջախի հետ է կապված նրա աշխատանքային գործունեությունը: Նա իր շնորհաշատ գործընկերների հետ ուժ ու եռանդ չի խնայել հայ արևելագիտությունը զարգացնելու և միջազգային բարձունքներին հասցնելու համար՝ արձանագրելով տպավորիչ նվաճումներ: Հիրավի, հիացմունք ու զարմանք են առաջացնում նրա աշխատասիրությունը և անմնացորդ նվիրումը հայ արևելագիտությանը, որին անդավաճան զինվորագրվելը պատիվ է բերում գիտնականին:

Ն. Հովհաննիսյանը արդի հայ արաբագիտության հիմնադիրն է, նրա անվիճելի և երևելի առաջատարը: Մոտ քառասուն տարի գլխավորելով Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժինը՝ նրան հաջողվել է ստեղծել գիտական ամենաբարդ խնդիրները լուծելու ունակ արաբագետների մի կուռ կոլեկտիվ, որը կարողացավ հայ արաբագիտությունը հասցնել արդի գիտության պահանջների մակարդակին: Պատահական չէ, որ Արևելագիտության ինստիտուտի արաբագիտության բաժինը համարվել է նախկին Խորհրդային Միության արաբական ուսումնասիրությունների կարևոր կենտրոն:

Իր մտավոր ու կազմակերպչական փայլուն ունակությունները և գիտական բարեխղճությունը նկատի առնվեցին, երբ Ն. Հովհաննիսյանը նշանակվեց Արևելագիտության ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ: Այնուհետև, 1995 թ. մինչև 2006 թ. նա անընդմեջ վարել է նույն ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Այս նոր կարգավիճակում անվանի գիտնականը իրեն դարձյալ դրսևորել է որպես նախաձեռնող, եռանդուն, սկզբունքային ղեկավար: Հատկապես վճռական դեր է խաղացել հայ արևելագիտության հիմնական ուղղությունների ձևավորման ու զարգացման գործում՝ կարևորելով հայ արևելագիտության ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություններն ու գիտական առաջնահերթությունները: Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ էր, որ 2003 թ. Արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծվեց նոր՝ Արևելասիական ուսումնասիրությունների բաժինը՝ դրանում առաջին հերթին ընդգրկելով Հընդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի պատմությունը, քաղաքականությունը և այդ երկրների հետ Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունների խնդիրների ուսումնասիրությունը: Դրանով իսկ հայ արևելագիտության գիտական հետաքրքրությունների ոլորտը դուրս եկավ Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի սահմաններից և ծավալվեց, Ն. Հովհաննիսյանի իսկ բնութագրմամբ, «Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս»:

Առանց վերապահության կարելի է ասել, որ երբ մեր հանրապետության գիտությունը ապրում էր դժվարին ժամանակներ, և շատերը հարկադրված էին սոցիալական բեռի տակ լքել գիտությունը, Ն. Հովհաննիսյանն ուղղակի սխրանք գործեց: Նա կարողացավ պահպանել հայ արևելագետի «գենոֆոնդը» կամ գիտնականների հիմնական կորիզը և հույս ներշնչել նրանց ապագայի նկատմամբ: Դրա շնորհիվ արևելագիտությունը Հայաստանում ոչ միայն չկործանվեց, այլև արձանագրեց ուղղակի անհավատալի արդյունքներ գիտական թեմաների կատարման և հատկապես դրանց հրատարակման բնագավառում: Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի անդուլ ջանքերով դրամաշնորհներ ձեռք բերվեցին արտասահմանյան մի շարք հիմնադրամներից: Դա Արևելագիտության ինստիտուտին հնարավորություն տվեց յուրաքանչյուր տարի հրատարակելու 15-20 մենագրություն և ժողովածու, որն ամենաբարձր ցուցանիշներից մեկն էր Գիտությունների ակադեմիայի համակարգում:

Արդարև, Ն. Հովհաննիսյանի անդադրում ջանքերի շնորհիվ ընդլայնվեց Արևելագիտության ինստիտուտի հեղինակությունը միջազգային ասպարեզում: 2000 թ. Մոնրեալում գումարված արևելագետների համաշխարհային կոնգրեսում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտն ընտրվեց Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ:

Ն. Հովհաննիսյանի՝ հայ արևելագիտությանը մատուցած խոշոր ծառայություններից է այն, որ նա մշտապես նպաստել է Արևելագիտության ինստիտուտի միջազգային կապերի ծավալմանը: Դյուրահաղորդ խառնվածքի և նպատակասլացության շնորհիվ նրան

հաջողվել է աշխարհի տարբեր ծագերի արևելագիտական կենտրոնների հետ հաստատել փոխադարձ կապեր և գիտական համագործակցություն:

Թեև գիտակազմակերպչական գործունեությունը անվանի գիտնականի տարերքն է, սակայն նա, առաջին հերթին, գիտնական է, իր բովանդակ էությամբ ու կենսակերպով գիտության մարդ: Ընդ որում, բեղմնավոր գրչի տեր գիտնական: Նա տարբեր լեզուներով հրատարակել է ավելի քան 470 աշխատություն, այդ թվում՝ 60 մենագրական ուսումնասիրություններ, որոնք լույս են տեսել ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում, Հունգարիայում, Թուրքիայում, Ճապոնիայում, Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Իրանում, Եգիպտոսում և այլ երկրներում: Անկասկած, այդ աշխատությունները միջազգային ճանաչում են բերել ոչ միայն անձամբ մեր պանծալի հոբելյարին, այլև հայ արևելագիտությանը:

Չափազանց լայն ու ընդգրկուն է պրոֆ. Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Թեև նրա պրպտող միտքը հիմնականում բևեռված է Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանի վրա, սակայն շատ հաճախ թափանցում է ավելի հեռուներ, երբ մասնավորապես խոսքը վերաբերում է մեր հարափոփոխ աշխարհի քաղաքագիտական վերլուծությանը:

Ն. Հովհաննիսյանի աշխատություններին բնորոշ են գիտական նորույթը և արդիական շունչը, Արևելքի երկրների զարգացման հեռանկարը կանխատեսելու ոգին:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում տասնամյակներ շարունակ եղել է արաբական երկրների պատմությունը: Նրան հատկապես հետաքրքրել են այդ երկրների ազգային-ազատագրական շարժումների և անկախ պետությունների կազմավորման հիմնախնդիրները, որոնք նա ուսումնասիրել է խորքային ձևով՝ շրջանառության մեջ մտցնելով մեծ քանակությամբ փաստագրական նյութեր: Արդիական և հույժ կարևոր հնչեղություն ունեն նշված թեմայով նրա հրատարակած յոթ մենագրությունները: Այդ աշխատություններն անմիջապես թարգմանվել են օտար լեզուներով և հրատարակվել տարբեր երկրներում՝ արժանանալով արտասահմանյան գիտնականների բարձր գնահատականին: Իր երիտասարդական ավյունի շնորհիվ, որը զորեղ է ամեն մի առաջացած տարիքից, պրոֆ. Ն. Հովհաննիսյանը կատարեց գիտական իսկական մի սխրանք: Նա ձեռնամուխ եղավ արաբական երկրների ամբողջական պատմության ստեղծմանը: Նրա «Արաբական երկրների պատմությունը» քառահատոր աշխատությունը, որի խմբագրի պատվին եմ արժանացել ես, իր բնույթով եզակի, կոթողային և հիմնարար աշխատություն է, որը մեծ գնահատանքով ընդունվեց հանրության կողմից, և նրա հեղինակը 2007 թ. արժանացավ ՀՀ Նախագահի մրցանակին:

Ն. Հովհաննիսյանի գիտական շեշտված հետաքրքրություններից է միջազգային հարաբերությունների պատմությունը: Իրավամբ, իր աշխատանքները նրան բերել են հմուտ և լայնախոհ միջազգայնագետի համբավ: Նրա աշխատանքներում մեծ տեղ է գրավում հատկապես Մերձավոր ու Միջին Արևելքում միջազգային և տարածաշրջանային հարաբերությունների ուսումնասիրությունը, որը նա իրականացրել է համաշխարհային ընդհանուր գործընթացների և Առաջավոր Ասիայի իրողությունների ընդհանուր հենքի վրա: Այդ աշխատություններից պետք է մատնանշել «Դիվանագիտություն», «Իրաքի Հանրապետության հարաբերությունները արաբական երկրների հետ», «Մեծ

տերությունների քաղաքականությունն Արաբական Արևելքում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» և այլն:

1998 թ. անգլերենով հրատարակած «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը» աշխատությունը բնույթով առաջին հետազոտությունն էր՝ նվիրված անկախությունը վերագտած Հայաստանի արտաքին քաղաքականությանը: Այդ, ինչպես նաև նրա մեկ այլ աշխատություն՝ «Դիվանագիտություն. ֆունկցիաները, մարմինները, պաշտոնյաները» վերնագրով, դարձան սեղանի գիրք և անկախ Հայաստանի դիվանագետների առաջին սերնդի պատրաստման մասնագիտական ուղեցույց:

Մեր խորին համոզմամբ, առանձնապես հետաքրքիր են գիտնականի՝ արաբական գաղափարախոսության ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները: Դա մի բարդ, իսկ եթե նկատի ունենանք արևելյան հասարակության յուրահատկությունը, ապա նաև հույժ խճողված բնագավառ է, որը մեծ դժվարություններ է ստեղծում հետազոտողի համար:

Պետք է առանձնացնել մեր ժամանակների հրատապ խնդիրներից մեկի՝ քաղաքական իսլամին նվիրված՝ Ն. Հովհաննիսյանի աշխատությունները: Դրանցից է «Իսլամի քաղաքականացումը և քաղաքականության իսլամացումը» տեսական բնույթի գործը, որը լույս է տեսել Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի որոշմամբ: Ն. Հովհաննիսյանը պատկառելի ներդրում ունի քաղաքական իսլամի ուսումնասիրության բնագավառում, որի նկատառումով նա նշանակվել է իսլամագիտական հետազոտությունների համակարգող Հայաստանում:

Գիտնականի ուսումնասիրությունների մի կարևոր բնագավառ է հայ-արաբական փոխհարաբերությունների ուսումնասիրությունը պատմական տարբեր դարաշրջաններում, հայ համայնքները և նրանց դերակատարման հիմնահարցը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Այս թեմայով արաբերեն և այլ լեզուներով Բեյրութում, Հալեպում և Կահիրեում հրատարակված նրա մենագրական ուսումնասիրությունները և գիտական բարձրարժեք հոդվածները նոր խոսք էին հայագիտության և արևելագիտության մեջ:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանի աշխատությունների մի զգալի մասը նվիրված է էթնոքաղաքական կոնֆլիկտների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրների ուսումնասիրությանը: «Ղարաբաղյան հիմնախնդիրը. Անկախության և ազատության փշե ճանապարհը», «Էթնոքաղաքական կոնֆլիկտներն Անդրկովկասում: Նրանց արմատները և լուծումները» և այլ աշխատություններ՝ տպագրված ԱՄՆ-ում, Ռուսաստանում և Իտալիայում, զգալի դեր են խաղացել արևմուտքի առաջատար պետություններում և միջազգային զանազան կազմակերպություններում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ ճշմարտացի պատկերացում կազմելու անչափ կարևոր գործին:

Առանձնահատուկ տեղ են գրավում Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված պրոֆ. Ն. Հովհաննիսյանի աշխատությունները: Այդ բնագավառում նրա անուրանալի և խոշոր ծառայությունն այն է, որ նա գիտական համոզչությամբ ցույց է տալիս արաբ ազնիվ և ասպնջական ժողովրդի մարդասիրական օգնությունը հայ տարագրյալներին՝ 1915 թ. ցեղասպանության ժամանակ: Այդ առումով բացառիկ նշանակություն ունի «Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո» մենագրությունը, որը հայերենից թարգմանվեց անգլերեն, ապա պարսկերեն: Անկասկած, դա նոր խոսք էր Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում: Այնուհետև 2009 թ. պրոֆ. Ն. Հովհաննիսյանը հանրության դատին հանձնեց «Հայոց ցեղասպանություն. հայասպանությունը որպես ամենագենոցիդային գենոցիդ» աշխարհի տասը լեզուներով

(անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, հայերեն, արաբերեն և պարսկերեն) կոթողային, իր նախադեպը չունեցող աշխատությունը, որը մասնագետների կողմից ճանաչվեց որպես գիտական կարևոր երևույթ: Այդ ինքնատիպ ուսումնասիրությունը 2010 թ. արժանացավ ՀՀ մշակույթի նախարարության Առաջին կարգի դիպլոմի: Իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում նաև բազմավաստակ արևելագետի 2010 թ. հրատարակած «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է» ուսումնասիրությունը, որում հիմնավորված է հայոց ցեղասպանության ճանաչման հարցում նոր մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը:

Ն. Հովհաննիսյանը՝ իբրև մեր ժամանակների ականավոր արևելագետ գիտնական, արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ է, այդ թվում՝ Փարիզի գիտությունների «Արարատ» միջազգային ակադեմիայի, Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի, Մոսկվայի Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտությունների միջազգային ակադեմիայի, Գերմանիայի Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի և այլն, որոնց թիվն անցնում է մեկ տասնյակից:

Պրոֆ. Ն. Հովհաննիսյանն իր գործընկերների շրջանում հայտնի է որպես «նոր գաղափարների գեներատոր»: Գիտական բանախոսություններով նա հանդես է եկել տարբեր երկրներում գումարված՝ արևելագետների համաշխարհային կոնգրեսներում և միջազգային այլևայլ գիտաժողով- ներում: Համբուրգում գումարված՝ արևելագետների համաշխարհային կոնգրեսում 1986 թ. նա առաջ քաշեց արաբական երկրների անհավասա-բաչափ զարգացման տեսադրույթը, որը մեծ հետաքրքրության արժանացավ աշխարհի խոշորագույն արևելագետների կողմից: 2000 թ. Մոնրեալում արևելագետների հերթական կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց «Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհա-քաղաքական նոր տարածաշրջանի ձևավորման վերաբերյալ» իր տեսակետը:

Ն. Հովհաննիսյանը արտասահմանյան գիտական զանազան կենտրոնների կողմից բազմիցս հրավիրվել է համատեղ գիտական աշխատանքի: Բրիտանական ակադեմիայի հրավերով 1989 թ. գիտական աշխատանք է կատարել Լոնդոնի և Օքսֆորդի համալսարաններում և Միջազգային հարաբերությունների արքայական ինստիտուտում («Չաթամ Հաուզ»)՝ շահելով Ֆուլբրայթի մրցանակ, 1993-1994 թթ.՝ մեկ տարուց ավելի աշխատել է ԱՄՆ-ի Ջորջ Վաշինգտոնի, իսկ 1995 թ.՝ մոտ կես տարի՝ ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարաններում: Նրան արտասահմանյան քաղաքական և օրենսդիր մարմինները հրավիրել են լսումների և քննարկումների, այդ թվում՝ ԱՄՆ-ի սենատի Միջազգային հարաբերությունների կոմիտեն, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը, Մեծ Բրիտանիայի Ֆորին օֆիսը և այլն: Նա խորհրդային, ապա անկախ Հայաստանի պաշտոնական պատվի-րակությունների կազմում այցելել է աշխարհի տարբեր երկրներ, հանդիպումներ ունեցել պետական բարձրաստիճան գործիչների հետ և իր ներդրումն ունեցել քննարկվող հարցերի լուծման գործում:

Գիտական գործունեության հետ Նիկոլայ Հովհաննիսյանը կատարել է մեծ ծավալի հասարակական աշխատանքներ: Նա եղել է Սովետա-արաբական բարեկամության և մշակութային կապերի ասոցիացիայի փոխնախագահ, Ասիայի և Աֆրիկայի համերաշխության սովետական կոմիտեի և նրա վարչության անդամ, Հայ-արաբական բարեկամության ընկերության նախագահ, «ԽՍՀՄ-Լիբանան», «ԽՍՀՄ-Իրաք» և «ԽՍՀՄ-

Եմեն» բարեկամության ընկերությունների փոխնախագահ: Նա Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անդամ է: Նրա ակտիվ մասնակցությամբ 2007 թ. Կահիրեի համալսարանում բացվել է Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն: Նա կոնֆլիկտների լուծման Հայկական կենտրոնի հիմնադիր տնօրենն է և Հայ-ատլանտյան ասոցիացիայի պրեզիդենտը:

Պարգևատրված է հայրենական և արտասահմանյան բազմաթիվ մեդալներով և պատվոգրերով: Շահել է տարբեր մրցանակներ: 2010 թ. պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանն ընտրվել է իր ծննդավայրի՝ Գյումրիի պատվավոր քաղաքացի:

Ականավոր գիտնականի և միջազգայնագետի գիտական ծառայությունների միջազգային ճանաչման վկայություններից է նաև այն, որ Քեմբրիջի (Անգլիա) Միջազգային կենսագրական կենտրոնը նրան 2004 թ. ճանաչել է «XXI դարի ականավոր գիտնական», 2005 թ. հռչակել «Աշխարհի առաջատար գիտնական», իսկ 2009 թ. մտցրել «Աշխարհի 100 ամենակարևոր գիտնականների» ցանկ:

Նշանակալի է Ն. Հովհաննիսյանի ներդրումը արևելագիտական կադրերի պատրաստման բնագավառում: Նրա գիտական ղեկավարությամբ դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մոտ երեք տասնյակ արևելագետներ, այդ թվում՝ արտասահմանյան տարբեր երկրներից: Նա նաև արևելագիտությանը, միջազգային հարաբերություններին, քաղաքագիտությանը վերաբերող զգալի թվով հրատարակություններ է գրախոսել, խմբագրել և նպաստել դրանց հրատարակությանը: Երկար տարիներ երախտավոր գիտնականը՝ որպես Արևելագիտության ինստիտուտի ատենախոսության պաշտպանության մասնագիտական խորհրդի նախագահ, նպաստել է ոչ միայն հայ, այլև օտարազգի գիտնականների բարձրակարգ արևելագիտական ատենախոսությունների պաշտպանությանը: Նա իր լուման ունի նաև պատմության դասագրքեր ստեղծելու գործում:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը ազնիվ նվիրումի ու նկարագրի տեր, բազմակողմանի հետաքրքրություններ և ծրագրեր ունեցող մարդ է, մի խոսքով՝ անհատականություն: Նրան բնորոշ է արտասովոր աշխատունակությունը, անմիջականությունը, բարյացակամությունը և հանրությանը ծառայելու պատրաստակամությունը: Նաև համագործակցության ոգին: Ազատախոհ է, ակտիվ խառնվածքով մարդ, որն ունի նաև իր սկզբունքները պաշտպանելու անկոտրում հաստատակամություն:

Սրտանց շնորհավորելով մեր գրչակից ընկերոջ ծննդյան 80-ամյակը՝ նրան մաղթում ենք քաջառողջություն, երկար տարիների կյանք, մշտանորոգ կորով և ազգանվեր նոր իրագործումներ:

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ Վ. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր